ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

587 19 Մայիսի 1999

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ԵՐՈՒՍԱՂԷՄ

Սիրելի Պատրիարք Եղբայր,

Յուլիսի 2-4-ը ինչպէս գիտէք, Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին պիտի այցելի Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբութիւն Յովհաննէս-Պօղոս Բ Պապը՝ Մեր և Հայաստանի Հանրապետութեան Վսեմաշուք Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանի հրաւէրով:

Նորին Սրբութեան՝ նախադէպը չունեցող այցելութիւնը Հայաստան՝ Կաթոլիկ Եկեղեցու հովուապետի խորին յարգանքի մատուցումն է 2000-ամեայ քրիստոնէական կեանք ապրած մեր ժողովրդին և նրա Առաքելահաստատ Եկեղեցուն, ի մասնաւորի՝ նրա հաւատքի պետականօրէն ճանաչման 1700-ամեակի նախաշեմին: Այն նշանակալի իրադարձութիւն է նաև ողջ քրիստոնեայ աշխարհի համար՝ էկիւմենիկ ոգու իր արտայայտութեամբ:

Սիրելի Պատրիարք, Պապի Հայաստան և Սուրբ Էջմիածին այցելութեան կապակցութեամբ, հրաւիրում ենք Ձեզ՝ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին ընկերակցութեամբ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռէն մէկ եպիսկոպոսի:

Մեր հանապազօրեայ աղօթքով առ Աստուած հայցում ենք, որ Տէրը շարունակաբար պահի Ձեզ կորովամիտ և եռանդաշատ Երուսաղէմի Պատրիարքական գահին՝ զօրացեալ բազմանդամ միաբանութեամբ և ժողովրդով մեր հաւատացեալ: Անանձնական, բոլորանուէր Ձեր սպասաւորութեան մէջ մաղթում ենք եկեղեցաշէն ձեռնարկումների հաջողութիւններ և երջանկութեան բազում առիթներ:

Եղբայրական սիրո ողջունիւ,
Աղօթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@